

13.873

31214961

15-11

ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ


Ը

ԹԻԻՐԻՔԻԱԻ ՀԱՅԵՐՆ

ԵՒ

ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ

ԳՐԵՑ Մ. Ս.



ՄԱՐՍԷԼ

ՀԱՅԵՐՆԵՆ ՏՊԱՐԱՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ  
Marseille. — Imp. Schickler et Pignatelli, r. Vacon, 50  
1890

Ref.

15114-58



21243

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

274961

Ը

26 SEP 2006

ԹԻԻՐՔԻԱԻ ՀԱՅԵՐՆ

ԵԻ

ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ



ՄԱՐՍԷՅԼ

ՀԱՅԵՐԷՆ ՏՊԱՐԱՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ  
Marseille. — Imp. Schickler et Pignatelli, r. Vacon, 50

1890

21 JUN 2013

13873

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Թիւրքիաի մէջ պաշտօնական ճիշդ վիճակագիրներ և հաշիւներ կը պահսին: Թո՛ղ ուրիշ երկիրների մէջ վիճակագրութիւնները տարածուին մինչեւ իսկ այժմ, հաւին ու հաւկթին վրայ. Թիւրք կառավարութիւնը այդ կարգի ձանճրոյթներ յանձն առնելու ո՛չ ժամանակ և ո՛չ կամք ունեցած է դեռ:

Արդէն հին Թիւրքերի կարծիքով, մահմետական կրօնի ոգուն ալ հակառակ է վիճակագրութիւն շինել և գիտնալը թէ ո՞րչափ բնակիչ կայ, ինչքան կապրին, ինչ հարստութիւն ունին և այլ այդ կարգի բաներ որոնք Աստուծոյ միայն գիտնալիքն են: Հին Թիւրքի բուն համոզումը կը ներկայացունէր Մուսուլի Գատին իր հետեւեալ կարեկցական յանդիմանութիւնով, զոր ուղղեր էր Սրբ Լայարդ անգլիացի հնախոյզին. « Ո՛վ իմ ականաւոր

բարեկամ, ըսած էր, ինչ որ կը հար-  
ցունես ինձ, միանգամայն անօգուտ է  
և վտանգաւոր. թէպէտ իմ բոլոր օ-  
րեր այս քաղաքի մէջ անցած են,  
սակայն երբէք չեմ մտածած անգամ  
սորա տուններն հաշուելու և ոչ իսկ  
տեղեկանալու թէ ո՞րքան բնակիչ կայ:  
Իսկ գալով գիտնալուն թէ այս ինչն  
ո՞րչափ վաճառք կը բեռցունէ իր ջո-  
րիների վրայ և այն ինչն իր նաւակի  
մէջ, դոքա երբէք ինձ չեն վերաբե-  
րիր: Եթէ դու աւելի գիտութիւն  
ունենաս, այդ գիտութիւն պիտի կա-  
րենա՞յ երկու ստամոքս տալ քեզ և  
այն աչերդ որով ամեն կողմ խուզար-  
կել կը գնաս, պիտի գտնել տա՞ն քեզ  
արքայութիւնն»: Բայց եթէ հին Թիւր-  
քերն իսլամի սկզբունքներով սնուած,  
անփոյթ դարձեր են, նոր Թիւրքերն  
ալ որոնք բարբարոսական բնազդու-  
ները ծածկել կը ջանան քաղաքակր-  
թական կեդժաւոր դիմաւոր մը ներքեւ,

գոքա ալ վերջին ծայր ծուլացեր են և  
սեէ լուրջ ու հիմնական աշխատութենէ  
խրաչող սերունդ մը կը կազմեն և օրն  
օրին ապրիլ միայն կաշխատին, իրենց  
ընդարձակ երկիրներ ընդ երկար ձեռ-  
քերնին պահելէ յուսահատ:

Թերի հաշիւների վրայ շինուած  
պաշտօնական վիճակագիր մը միշտ կը  
գտնուի սակայն թիւրք գիւտնների  
մի անկիւն, թէեւ ոչ ոք վստահու-  
թեամբ ցարդ դիմած է անոր:

Օտար տէրութիւնների հիւպա-  
տոսները, Եւրոպացի ճանապարհորդ-  
ներն ալ իրենց անձնապէս ստացած  
տեղեկութիւնների և բրած քննու-  
թիւնների համեմատ մասնաւոր վի-  
ճակագիրներ շինած են: Թիւրքահա-  
յերի պատրիարքարանն ալ ասկէ 10-  
12 տարի առաջ իր պատուիրակների  
միջոցով շինել սկսեց հայկական դա-  
ւառների ազգահամարը, բայց թիւրք  
կառավարութեան խիստ արգելքները

և թշնամական կասկածները թող չը  
տուխն իրեն ուրիշ անգամ ալ կրկնել  
այդպիսի ձեռնարկ մը :

Բայց գէթ օտար ուղեւորները և  
հիւպատոսները ցոյց տուած թուա-  
նշանները ճիշդ լինէին . դժբաղդա-  
պէս անոնք ալ շատ անգամ կոշտ սը-  
խալների մէջ կիյնան և իրարմէ շատ  
տարբեր թիւեր ցոյց կուտան : Այս-  
պէս Էլիզէ Ռէքլիւ Ֆրանսոցի նշանա-  
ւոր աշխարհագիրն՝ որ գրեթէ թղթա-  
տեր է Հայաստանի մասին գրուած  
բոլոր եւրոպական ուղեգիրները և աշ-  
խարհագրական տեղեկութիւնները ,  
չէ կրցած ազատուիլ մեծ սխալներ  
ունենալէ . Վան գաւառի բնակիչների  
թիւը 30,000 և Մուշինը 15,000 կը  
հաշուէ , մինչդեռ առաջինը ունի  
190,000էն աւելի բնակիչ և երկրորդը  
130,000 . Էրզրում քաղաքի բնակիչ-  
ները 20,000ի կիջեցունէ թէեւ այդ  
քաղաքի մէջ 80,000ի մօտ անձ կը

բնակի : Աշխարհագիր մը Լազերի թիւը  
100,000 կը նշանակէ , մէկ ուրիշը 5,000  
միայն . մէկ գրքի մէջ Քուձօ-Վլազ-  
ները 115,000 են , ուրիշի մը մէջ 900  
հազար : անգին Մարոնիները 500,000  
կը հաշուեն , ասդին 250,000 և այսպէս  
ուրիշ շատ մը ահագին տարբերու-  
թիւներ զանազան վիճակագիրների  
մէջ : Հիւպատոսները և ուղեւորները  
բնակիչների մանրամասն հաշիւները  
չեն կրնար հանել . յաճախ հաւանա-  
կանութիւնների , վեր ի վերոյ ենթա-  
գրութիւնների վրայ և երբեմն ալ ա-  
ռաջին հանգիստ և զիրենք հիւրըն-  
կալօղ տեղացու ըսածներին վրայ կը  
հիմնեն իրենց հաշիւ և շատ անգամ  
ալ քաղաքական նկատումներէ ներ-  
շնչուած՝ կիջեցունեն կամ կը պակսե-  
ցունեն գրիչին չափազանց հնազանդ  
թուանշանները : Հայաբնակ գաւառ-  
ների բնակիչների թիւը երբեմն տան  
թիւերի վրայ կը չափեն օտարական

ուղեւորները . բայց այդպիսի հաշուէ մը մեծ սխալներ առաջ կուգան : Օտարականը անծանօթ է թիւրք և հայ ընտանիքների կազմակերպութեանը . նա չգիտէ թէ Հայաստանի Հայերը առհասարակ հին նահապետական սովորութիւնները կը պահեն և եղբայրներն իրենց ընտանիքներով, հօրեղբօրորդիները , թոռները մէկ յարկի տակ կապրին , մէկ տուն կը կաղմեն . այսպէս սովորական է տեսնել 13-20 անդամներով տուններ թէև կան շատեր ալ որ 30 և 40 անդամ ունին . հայ ընտանիքի անդամների թիւը միջեւ հաշուով 7էն պակաս չէ : Իսկ մահմետականների մէջ երկու ամուսնացած եղբայրներ մէկ տան մէջ չեն ապրիր , բաժան տուններ կունենան հարէմական դրութեանը պատճառով , ուստի և անոնց ընտանիքները միջին հաշուով 4էն աւելի անդամ չեն ունենար : Առանց անհատները

հաշուելու միայն հայ տունների թիւը և քրդի վրանների թիւը հաշուելով չէ կարելի անցնել Հայաստանի վիճակագրութեան մէջ : Եթէ քրդուհին այծերը , ուրբը շատցունել կը նայի , հայուհին ալ շուտ շուտ զաւակներ կարտագրէ և Հայը բաղձածին ժողովուրդների կարգը կը դատուի : Հայոց Ձուրէն Խոսի գիւղացի Ատոմ 18 մանչ զաւակ ունի որոց մեծ մասն ալ ամուսնացած են և իր տան մէջ կըմնան , Նորտուղի Սիւքիւնիս գիւղացի 70 տարեկան Հռիփսիմէն 43 հոգիէ բաղկացած ընտանիքի մը պէտէն է . Մուշի դաշտի և Խնուսի գիւղերի ռէսների տունները Յակոբ նահապետի ընտանիքը կը յիշեցունեն : Եւ ինչպէս տան , նոյնպէս ալ գիւղերի թուին համեմատ գաւառի բնակիչների թիւը և զանազան ցեղերի բռնած գումարը հաշուելը աւելի անհեթեթ սխալների կը տանի վիճակագիրը : Բաւուրի հայաբնակ

մէկ գիւղը միայն , Հովաւը, 1436 բը-  
նակիչ ունի , իսկ քովի Գառաշոր քրք-  
դաբնակ գաւառի մէջ եղող 50 գիւ-  
ղերը մէկտեղ ունին ընդամենը 1100  
բնակիչ. քովը ուրիշ քրդաբնակ գաւառ  
մի Գառապէկեան, 20 գիւղ ունի 1000  
բնակիչով, իսկ Վանայ Տոսը հայաբը-  
նակ գաւառը 20,000 բնակիչ ունի 40  
գիւղերի մէջ , Հայոց Զորը 8500 բնա-  
կիչ ունի 35 գիւղերի մէջ : Բղիի 360  
գիւղերէն 300ը քրդաբնակ են և 40ը  
միայն հայաբնակ. բայց Բրդերի գիւ-  
ղերը 5-10-20 տուն բնակիչ ունին ,  
Հայերը 20էն 200 , որով գիւղերի թը-  
ւին նայելով շինուած քրդական մե-  
ծամանութիւնը զէրօի կիջնայ գրեթէ :

Ուրեմն երբ չունինք պաշտօնա-  
կան կամ ճշդութեան մօտիկ անպաշ-  
տօնական ոեւէ վիճակագրութիւն, այն  
ատեն կը ստիպուինք շատ աղբիւրներ  
գիմել , շատ հաշիւներ և անհատա-  
կան վիճակագիրներ պըպտել , այս-

տեղ բաղդատական ցուցակ մը գնե-  
լու համար : Այսպէս Թրքաց 1878ի  
Սալնամէն և 1889ին երկրին մէկ մա-  
սին պաշտօնապէս շինուած աղգա-  
համարը , Աղգային Պատրիարքարա-  
նի պաշտօնեայների տեղեկագիրները ,  
Եւրոպական մի քանի կարեւոր աշ-  
խարհագիրների վիճակագրութիւն-  
ները աչքի առջեւ ունենալով և ա-  
գանց վրայ աւելցունելով ստացուած  
նորագոյն ծանօթութիւններ , մօտա-  
ւոր հաշիւ մը աստ պիտի ներկայենք  
Թիւրքիաի մէջ ապրող այնչափ ալլա-  
զան Ժողովուրդների , ցեղերի թուին  
վրայ , գրելով նաեւ իւրաքանչիւրի  
մասին մէկ քանի աղգագրական ծո-  
նօթութիւններ : Բայց կը յայտնենք  
միանգամայն որ այս տեսակ վիճակա-  
գրական կամ աշխարհագրական ձեռ-  
նարկներն պէտք է որ միշտ ենթարկ-  
ուին սրբագրութիւնների որպէս զի  
կարենան ահաջել իրենց արժէք և նո-

Ժ

ըութիւն . ուստի ուրախ պիտի լինինք եթէ առիթ ունենանք աւելի մանրամաս ու աւելի ճիշդ հաշիւներ և տեղեկութիւններ գրուած տեսնելու մեր շօշափած խնդրի մասին և այդպիսի մի ջանքի կըսպասենք թէ՛ տեղացիների և թէ՛ Հայաստանի ներկայ դրութեան աւելի հմուտ եղող անձերի կողմէն :

## ԹԻԻՐԲԻԱԻ ՀԱՅԵՐՆ

ԵՒ

## ԻՐԵՆՑ ԴՐԱՅԻՆԵՐ

Թիւրքիաի մէջ այժմ կապրին 22  $\frac{1}{2}$  միլիոն բնակիչ որմէ 4  $\frac{1}{2}$  միլիոնը Եւրոպայի կողմը կը գտնուին , 1 միլիոնը Ասիական մէջ և 17 միլիոնը Սիւրիայի կողմերը (հարկատու իշխանապետութիւնները , Եգիպտոս , Պուլկարիա , այս հաշուի մէջ չեն կրնար մտնել , ոչ ալ Կիպրոս ու Հէրսէք Պօսնիան) : Այս թիւեր երկրի ահագին տարածութեան հետ բաղդատելով կը տեսնուի որ այդ բարեբեր երկիրների մէջ շատ ցանցառ են բնակիչներ : Ասիական Տաճկաստան միայն 1,900,000 քառակուսի քիլօմէդր տարածութիւն ունի , գրեթէ Պրանսի չորս անգամն . բայց 8 կամ 9 մարդ հապիւ կը բնակի մէկ քառակուսի քիլօմէդր հողի վրայ , մինչդեռ Պրանսա նոյնչափ տեղի վրայ 80 մարդ կապրի , Անգլիա՝ 130 , Պելճիգա՝ մինչեւ 170 մարդ :

Թիւրքիաի մէջ Ժողովուրդը գրեթէ չը

չատնար , ընդհակառակն զանազան դա-  
ւառների մէջ ալ կը քիչնայ : Մահմէտա-  
կան ցեղերը անվերջ զինուորագրութիւն-  
ներով , ներքին դաւառների մէջ պատա-  
հող սովերով և տարափոխիկ հիւանդու-  
թիւններով կըսպառնին : Թիւրքերը շատ  
տեղեր կը թողուն երկրագործ կեանքը որ  
բազմամարդութեան գլխաւոր նպաստողն  
է և կը խռնուին քաղաքները կառավա-  
րական պաշտօններ ձեռք բերելու և ծոյլ  
ու ցոփ կեանք մ'անցունելու համար և այս  
տեղափոխութիւնն ալ իրենց նուազման կը  
նպաստէ : Քրիստոնէայ տարրն ալ նոյն-  
պէս կը նուազի աւերիչ հարստահարու-  
թիւնների պատճառով և անոնցմէ առաջ  
եկած գաղթականութիւնով ու պանդըխ-  
տութիւնով : 1828ին միայն Երզրում քա-  
ղաքէն 40,000 Հայեր գաղթեցին մէկ գի-  
շերուան մէջ , Այս վերջին պատերազմէն  
ի վեր Աղբակի , Ալաշկերտի , Մոկաց գա-  
ւառներէն 150է աւելի գիւղեր պար-  
պուած են , միայն 3000 ընտանիք Ալաշ-  
կերտէն թողին փախան , ճամբու վրայ  
անօթութենէ և հիւանդութենէ ջար-  
դուելով կիսովին : Խիզան լեռնային գա-  
ւառակէն 40 գիւղերի Հայերը պարպած

են գեղերնին , իրենց կալուածներ Քըր-  
դերի ձեռքը թողալ : 1858էն մինչեւ  
1878 , քսան տարուան մէջ , Վանայ լը-  
ճի հարաւային կողմն ընկնող վեց հայ  
գաւառակների 2440 տունը 585 տան ի-  
ջեր է և 61 եկեղեցի կամ քանդուեր են  
Քրդերի ձեռքով և կամ անժողովուրդ  
մնալով փլած և ամայի վիճակ մ'ունին  
այսօր : Հայաստանի հայաբնակ գեղերի և  
գաւառների աւելի մեծաքանդ աւերում-  
ներն և մեծագոյն ու խղճալի գաղթակա-  
նութիւնները տեղի ունեցեր են 1879  
թուականէն առաջ մինչեւ 1828 թուա-  
կանը : Պանդխտութիւնն ալ հայ ժողո-  
վրդի մաշողական ախտն է . 1870ին Ազ-  
գային Պատրիարքարանի վիճակագրով  
Հայաստանի գաւառներէն 30,000 պան-  
դուխտ կը գտնուէին ի Պօլիս , իրենց եր-  
կիր թողած ընտանիքին օրապահիկ ճա-  
րելու համար աշխատող . 5000էն պակաս  
չեն Թիֆլիզ , Պաթում , Բումանիա գըտ-  
նուող հայ մշակներն : Մուշի և Վանի մէջ  
ճամբորդը կրնայ պատահիլ գիւղերի ուր  
միայն աղջիկ և կնիկ մնացած են և տը-  
ղամարդի երես չտեսնուիր . նոքա ցըր-  
ուած են տար աշխարհ : Թիւրքիան տի .

րապետութեան առջի օրերէն սկսեց դատարկել իր երկիրներ բնակիչներէ . Կըրէտէ կղզին ասկէ 220 տարի առաջ, Թիւրքերի գրաւած ատենը, 700,000 բնակիչ ունէր . բայց 1847ին այդ Թիւր իջած էր 160,000ի , միայն թէ անկէ ետք Կրէտէ ազատամբելով ինքնավարութիւն ձեռք բերելէ ի վեր բնակիչներն նորէն սկսան շատնալ և հիմա 305,000ի կը հասնի իրենց թիւ : Ուրեմն հանելուէ չէ ալ թէ քրիստոնեայները ինչո՞ւ չեն բազմանար Թիւրքիաի մէջ , թէեւ զինուորագրութեան ենթակայ չեն :

Թիւրքիաի այս 22½ միլիոն բնակիչներ հետեւեալ կերպով կը բաշխուին զանազան ժողովուրդների .

|            |           |
|------------|-----------|
| Թիւրք      | 8,950,000 |
| Թիւրքմէն   | 250,000   |
| Յոյն       | 2,477,000 |
| Քուճօ վլաչ | 250,000   |
| Առնաւուտ   | 900,000   |
| Պուլկար    | 350,000   |
| Սերպ       | 50,000    |
| Չերքէս     | 550,000   |
| Լազ        | 50,000    |
| Զինկեանէ   | 50,000    |

|          |           |
|----------|-----------|
| Արաբ     | 3,800,000 |
| Տիւրզի   | 280,000   |
| Մարոնի   | 312,000   |
| Քօզաբ    | 30,000    |
| Հրէայ    | 158,000   |
| Սիրիացի  | 73,000    |
| Գըզըլպաշ | 335,000   |
| Եզիտի    | 20,000    |
| Քաղէպցի  | 233,000   |
| Քիւրդ    | 850,000   |
| Հայ      | 2,520,000 |

Գումար 22,488,000

1. Թիւրք ցեղ .—12րդ և 14րդ դարերն Հայաստան և Փոքր Ասիա արշաւող Սելճուզ հովիւները իրենց պատերազմական ձիրքերի շնորհով յաջողեցան մեզկացած և երկպառակուած Յոյների ձեռքէն առնուլ Կ. Պօլսի կայսրութիւնը : Այն ատենէ ի վեր , նոքա տեղաւորուեցան իրենց տիրած գաւառներէ ամենադեղնցիկներին և արգաւանդներին մէջ և այժմ , ինչպէս կը տեսնուի , այդ ցեղի բնակած տեղերը ծովային կամ երկրագործական յարմարութիւններով ամենէն սքանչելի դիր-

քերն են : Թիւրք ցեղը բռնած է գըլ-  
խաւորապէս Փոքր Ասիաի գաւառները ,  
բռնած է նաեւ Տաճկաստանի բոլոր ծո-  
վեղերը . միայն Արշիպեղազոսի ափերը  
և տեղ տեղ ալ Սեւ ծովի վրայ յոյն քա-  
ղաքներ և գիւղեր կը տեսնուին . Տրա-  
պիզոնէն սկսած մինչեւ Պօլիս , Տարտա-  
նէլէն մինչեւ Պէյրութ , Սիրիաի և Եփր-  
կիաի բոլոր ափերը մահմէտական տարրը  
կը բնակի : Չնայելով որ Թիւրք ցեղը բը-  
նաւ ճաշակ չունի նաւավարութեան և  
ծովային վաճառականութեան , բայց և  
այնպէս նա ծովեղերքի երկայնքով սըփ-  
առած է , կարծես միայն ներքին գա-  
ւառների քրիստոնեայ ժողովուրդների և  
մասնաւորապէս Հայ տարրի դէմ պատ-  
ուար մը լինելու համար որ սոքա ծովա-  
յին ընդարձակ յարաբերութիւնների մէջ  
չկարենան մտնել :

Թիւրք ցեղը աճման նշան մը ցոյց չը  
տար . արդէն հետզհետէ կը նուազի ինչ-  
պէս որ Թիւրք երեւելի պետական մարդ  
Ֆազըլ Մուսթաֆա փաշան ալ սոսկումով  
ստիպուեցաւ խոստովանիլ այս իրողու-  
թիւն և հաստատել Սուլթան Ազիզի ղըր-  
կած իր մէկ տեղեկագրի մէջ :

Թիւրքերն իրենց նախկին Թաթարա-  
կան տիպ չեն պահած բնաւ : Նախկին  
Սելճուկներէ ուղղակի իջած Թիւրքեր  
չառ չկան այժմ . ինչ որ կը տեսնենք այ-  
սօր , մեծ մասամբ Հայ , Յոյն , Պուլկար և  
Սերպ ազգերէ միլիոնաւոր Թիւրքով մահ-  
մէտականացած և Արաբ ու Քիւրդ ցեղե-  
րէ Թրքացած անհատների խառնուրդ  
մէջ : Եւրոպացիներն մէջ երբ Սուլթան Օր-  
խան Ենիքերի զօրագունդը կազմեց , Ֆեր-  
վա հանել տուաւ թէ « քրիստոնեայ ծը-  
նած բոլոր մանուկներն իրենց սրտի մէջ  
խաւով սերմը կը կրեն » ուստի մեծ ա-  
ռաքինութիւն է զանոնք խլել անհաւատ  
ծնօղներէն և մահմէտականութեան մէջ  
մեծցունել : » Այս կրօնական արտօնու-  
թեան վրայ , ի բաց առեալ ուրիշ բռնի  
կրօնափոխութիւններն , եղաւ մի ժամա-  
նակ որ միայն տարեկան 40,000 քրիս-  
տոնեայ (Հայ , Յոյն , Սլաւ) տղայներ կը  
յափշտակուէին իրենց ծնօղներէ ֆէթ-  
վային համեմատ և իբրեւ մահմէտական  
մեծնալէ ետք Ենիքերի գունդին մէջ կը  
մտնէին : « Երբէք յալթական կրօնք մը  
պարտուած կրօնքէն մարդկային էակի  
այս տեսակ ահռելի տուրք մ'առած չու-

նի» կը գրէ Լալալէ : Եւ իրօք զարմանալի չէ որ Թիւրքերը սկզբէն այնչափ շուտ զօրացան, բազմացան, այլ աւելի զարմանք կը գրաւէ այս կէտ թէ Թիւրքերին հպատակ քրիստոնեայ ազգերը ի՞նչպէս կրցան տոկալ և չկորսուիլ երբ իրենց ամենէն թարմ ոյժ ամեն տարի ահագին համեմատութիւնով իրենցմէ կը բաժնուէր, կտրուած շնչերակէ մը հոսող առատ արիւնի նման :

Երեք դար (1360-1669) սաստկութեամբ շարունակեց կրօնափոխական այս ազդասպան միջոց և այնուհետեւ սկսեց մեղմանալ : Բայց տակաւին 17րդ դարին մէջ կրօնափոխութիւններն այնչափ սովորական էին դարձեր և բուն Թիւրք ցեղն այնչափ աննշան էր ու պատուէ ընկած որ կառավարական բոլոր բարձրագոյն պաշտօնէութիւններն, Մեծ-Եպարքոսէն սկսելով, կրօնափոխ եղած քրիստոնեայների և անոնց սերունդների ձեռքը անցեր էին : Աղնուական կը համարուէր այն անձ որ ուրացած պապերէ և ծնողներէ առաջ եկած էր և այդ բան իրեն ամեն կարելիութիւն կուտար պաշտօնի մը և դիրքի մը հասնելու համար :

Այժմ եւս կեդրոն քաղաքները պաշտօնի և բնակութեան համար գիմած կամ գինւորական վարժարանների մէջ ընդունուած Արաբներն և Քիւրդերն, ինչպէս նաեւ գինուորագրութեան մէջ առնուած գրեթէ բոլոր այլասեռ բայց մահմէտական երիտասարդներն թրքերէն լեզուն սովորելուն պէս Թիւրք կը լինին : Այսպէս առաջ եկած են վան, Պիթլիզ, Պաշգալէ, Տիգրանակերտ, Հալէպ, Շամ եւն. քաղաքների Թիւրքերը որոնք կը պահեն տակաւին իրենց արաբական և քրդական բոլոր յատկանիւններ, հագուստէն և լեզուէն զատ : Թիւրք ցեղն իր մէջ կը լուծէ մնացած իսլամ ցեղերն, ազատ կը մընան միայն լեռան գլուխը և անապատի ներսերը մնացողներն :

Խրիմի պատերազմէն ի վեր Թիւրք ցեղը հետզհետէ կը թողու պալքանեան երկիրները, ինչպէս նաեւ Մեծն Հայաստանի գաւառները և կը խմբուի Փոքր-Ասիայի և Կիլիկիայի կողմերը : Մեծն Հայաստանի Երզրում, վան, Բաղէշ, Խարբերդ նահանգներին և Տիգրանակերտ նահանգին հիւսիսային մասին մէջ բոլոր Թիւրքերի թիւը 410,000էն անդին չանց-

ներ : Թիւրքաց 1878ի Ստընամէն 530,000ի կը հասցունէ ադոնց թիւ , անշուշտ շատ տեղերի Քուրդերը Թիւրքերի հետ խառնելով որովհետեւ այդ միեւնոյն Սաշնամէին մէջ Քուրդերի շատ փոքր թիւ մը նշանակուած է , իրականէն պակաս : Գըրուածիս վերջն դրուած ցուցակ մը կը նշանակէ թէ վերոյիշեալ նահանգներէն իւրաքանչիւրին ո՞րչափ Թիւրք կիյնայ :

Անատօլուի ներսերը բնակող թիւրք գիւղացին , պէտք է խոստովանիլ որ թաթարական վայրագ բնազդուններին հետ ունի նաեւ հիւրասիրութիւն , պարզութիւն և աշխատասիրութիւն , իբրեւ ժողովուրդ մը , ինքն ալ գրեթէ քրիստոնեայներին պէս կը հարստահարուի տիրող դասակարգէն : Բայց իբրեւ իշխող ցեղ մը թիւրք քաղաքացին կը կազմէ ամենէն անբարոյական և աւերիչ կառավարութիւնը որ 500 տարուան մէջ աշխարհի ամենէն գեղեցիկ մասերէն մին աւերակ դարձուներու և ժողովուրդները ստրկացներու միայն աշխատեցաւ :

2. Թիւրքմէն կամ Թարաքաման : — Ասոնք Կիլիկիաի և Փոքր Ասիաի գաւառ-

ները ցրուած կը բնակին . մեծագոյն մասը թափառաչըլիկ է և Եուրուք կը կոչուի ու աւազակութիւնով կը զբաղի . մէկ մասն ալ նստկան է և քրիստոնեայների հետ անտանելի կերպով կը նեղուի Եուրուքների ասպատակութիւններէն , որոնց սովորական առածն է « Թիւֆէնք եօզ , էքմէք եօզ » (հրացան չկայ , ուրեմն հաց ալ չկայ ) : Կիլիկիաի մէջ Թիւրքմէնների թիւը 30,000ի կը հասնի :

3. Յոյներ : — Արշիպեղագոսի ափերը և կղզիները , Մակեդոնիաի , Սեւ և Մարմարա ծովերի եզերքները ցրուած են : Իրենց ազգային ձգտումներ արդէն յայտնի են . յունական նախկին կայսրութիւնը Թիւրքիաի բեկորներին վրայ կանգնեն է իրենց ամենէն սիրելի մտածում : Արդէն իրենց ձեռքն ունին այդ երկրի առեւտուրի մեծ մասը : Իրենց հրատարակած հաշիւներ 4 միլիօնի կը հասցունեն իրենց թիւ Տաճկաստանի մէջ : Փոքր Ասիաի արեւմտակողմը յոյն տարրը շատ զօրաւոր է . կղզիներն զուտ յունաբնակ են գրեթէ ( $\frac{1}{2}$  միլիոն Արշիպեղագոսի մէջ) : Յոյներէն 3000 հոգիի չափ ալ Էրզրու-մի և Բաբերդի գաւառներն կը բնա-

կին : Վերջին պատերազմէն ի վեր Տրապիզոնի և Էրզրումի Յոյները մեծ բազմութեամբ սկսեցին գաղթել Ռուսաց կողմը, Կարսի նահանգը, ուր ռուս իշխանութիւններէն մեծ դիւրութիւններ կը գտնեն հաստատուելու համար : (1887ի վիճակագրովն, 10 տարուան մէջ 20,000 հօգիւ աւելի Յոյն գաղթած էին Կարսի նահանգը : ) Պրուսի և Նիկովիդիաի կողմերը, ինչպէս նաեւ Ակն և այլ մի քանի տեղեր, յունացած Հայեր շատ կան, որոնք թէեւ հայերէն կը խօսին բայց բոլորովին զատուած են Հայերէն :

4. Ալպանցիացիներ (Առնաւուտ) : — Ասոնց մէկ չորրորդը կաթողիկ քրիստոնեայներ են, մնացածը Սիւննի մահմետական : Եւրոպական Տաճկաստանի Շքօտրա-Եանեա կուսակալութիւններին մէջ կը բնակին : Ասոնք Բ. Դրան շատ հնազանդ ժողովուրդ մը չեն : Իրենց ցեղապետներ առատ նուէրների շնորհով առ այժմ զիջած են առերեւոյթս հնազանդութիւն յայտնելու : Բայց Գարատաղի հետ դրացիութենէ առաջ եկած թշնամութիւնը՝ փոխադարձ ասպատակութիւններ և մանաւանդ ալպանիական ապստամբ բնա-

ւորութիւնն ու իտալացիներին այդ երկրի վրայ ունեցած գաղտնի դիտումները միշտ տեւական վտանգներ կը պահեն Թիւրքիաի համար, իր այդ կշտի վրայ :

5. Քուճօ Վլաններ, Պալկարներ, Սերպեր : — Ասոնք Մակեդոնիաի մէջ խառն կը բնակին Յոյների և Թիւրքերի հետ և ազգայնութեան բուռն մրցումներ կը մղեն իրար դէմ : Այս նահանգի համար շինուած զանազան վիճակագրութիւններն ալ շատ հաճախական են այդ պատճառով : Իւրաքանչիւր ազգի կողմէն հանուած հաշիւները հակառակ ցեղերի թիւը չափազանց փոքր կը ներկայացունեն և փոխադարձապէս :

6. Չերքեսներ : — Ասոնք Կովկասի բերնիկներն են որ 1864ին Շամիլի նուաճումէն և իրենց լեռների ռուսական դրաւումէն ետք, 700,000է աւելի թուով գաղթեցին Տաճկաստան : Բայց իրենց կէսէն աւելին ոչնչացաւ սովէ, հիւանդութենէ և մանաւանդ գերեվաճառութենէ, որովհետեւ իրենց հիւրընկալ ձեռք երկնցունօղ թիւրք կառավարութեան պաշտօնեայները այն ատեն գանձեր դիզեցին գեղանի չէրքէսուհիների անհամար

աւարոյն : Առջինէն ետք , երկրորդ և  
գրեթէ նոյնչափ մեծ գաղթականութիւն  
մ'ալ հոսեց գէպի Թիւրքիա : 1878ի պա-  
տերազմէն ետք , 78,000 անձ ալ եկան :  
Ատոնք գլխաւորապէս Փոքր Ասիաի և  
Կիլիկիաի գաւառները զետեղուեցան .  
մանաւանդ Կիլիկիաի մէջ հայ տարրը նը-  
սեմացաւ Կովկասէն եկող անթիւ մահմէ-  
տական գաղթականների բազմութեանը  
առջեւ : Այս ազգագրական երեւոյթը շա-  
րունակական է Թիւրքիաի մէջ . ռուսա-  
կան գաւառներէ անդադար մահմէտա-  
կան հոսանք մը գէպի Թիւրքիաի հարա-  
ւային երկիրները կը թափի և Թիւրքի-  
այէն ալ քրիստոնեայ տարրը գէպի Կով-  
կաս կը դիմէ : Իւրաքանչիւր տարի միջին  
հաշուով 7000 հոգի կը գաղթեն Անդրկով-  
կասէն ի Թիւրքիա և կուգան լուծուիլ  
Թիւրք ցեղին մէջ : Նթէ կարենայ Թիւրք  
կառավարութիւնն այս ընթացքով դա-  
րեր շարունակել իր համիսլամական քա-  
ղաքականութիւն , Բիւրդ , Ձէրքէս , Լազ ,  
Արաբ անուններն պատմական անուններ  
պիտի դառնան մի օր : Ձէրքէսների գաղ-  
թականութիւնը ծնունդ տուած է այն  
բազմաթիւ աւազակախումբերի որոնք Կ .

Պօլսի բերանէն մինչեւ Մուշ տարած-  
ուած են : Մեծ-Հայաստանի գաւառնե-  
րին մէջ Ձէրքէսներն քիչուր են , զի դո-  
քա կը գոյաւանդին ռուս սահմանազը-  
լուիների մօտիկ տեղերն հաստատուիլ .  
ատոնցմէ 800 հոգիի չափ միայն հաս-  
տատուած են Մուշի և Վանի կողմեր :  
Ձէրքէս գիւղացին աշխատասէր , հնարի-  
մաց և մաքրասէր է . Փոքր Ասիաի մէջ  
շատ տեղեր կարելի է հանդիպիլ անոնց  
գեղեցիկ գիւղերին որ հակապատկեր մը  
կը կազմեն չրջակայ Թիւրք գիւղերի աղ-  
տոտութեանը :

7. Լազեր : — Մահմէտականացած այս  
Վրացիներ Տրապիզոնի վիլայէթին մէջ  
կը բնակին և ամեն տարի կաւելնան Պա-  
թումէն եկող գաղթական Ապազաներով :  
Նրբամիտ է Լազը . Պարսարեան լեռանց  
գահավէժ զառիվերներին վրայ ճարպի-  
կութեամբ կը յաջողի եգիպտացորեն մը-  
շակել և իր մատներով վշեայ ամենա-  
նուրբ գործուածներ կը շինէ . յանդուգն  
լուղորդ ալ է , բայց միանգամայն նենգա-  
ւոր մարդասպան մը և աւազակ մը : Թէ'  
Լազեր և Թէ' Ձէրքէսներ Սիւննի մահմէ-  
տական են :

8. Գնցու, կամ Զինկեանի ցեղը տա-  
րածուած է երկրին ամեն կողմերն : Ա-  
սոնք թէեւ ունին իրենց յատուկ սովո-  
րութիւններ և նոյն իսկ շատեր ալ գաղտ-  
նի կրօնական պաշտամունքներ ունին ,  
բայց յաճախ իրենց միջավայրի կրօնքը  
կը դաւանին : Ասոնց մեծ մասը Կ . Պօլսի  
չրջակայներն էտիրնէի և Մակեդոնիաի  
միջեւ կը գտնուին : Կարին բնակող 300  
տուն Գնչուները , Ամասիա-Մարգուան-  
Եւդոկիաի կողմերն գտնուող 7000 Բոշայ-  
ները լուսաւորչական քրիստոնեայ-  
ներ են . իսկ Վանի մէջ 400 Զինկեանէ-  
ներ կան որոնք մահմէտականների հետ  
կը հաշուին . բայց եթէ Վանի կամ ուրիշ  
տեղերի մահմէտական երեւոյթ ունեցող  
Գնչուները ազտօտ , խեղճ , քրիստոնեայ-  
ներին փողոց թափած կերակուրներովն  
գոհացող և հաւգող թափառաշրջիկներ  
են , անքին Մարսուանցի լուսաւորչա-  
կան Գնչուն բարեկեցիկ ժողովուրդ մը կը  
ներկայացունէ . ունի եղներ , ջորիներ ,  
ձիեր , կը պահէ մեծ տուններ , ունի մաք-  
րութեան սովորութիւններ և Երուսա-  
ղէմ ուխտի ալ կերթայ :

9. Արաբներ . — Մուսուլ , Պաղտատ ,

Հալէպ և Շամ նահանգներին մէջ կը բը-  
նակին , ինչպէս նաեւ բուն Արաբիաի (Հի-  
ճազ , Եէմէն) և Ափրիկեան Տրիպօլի կի-  
զուտ անապատները : Իրենց լեզուն կը  
տիրապետէ Տիգրանակերտէն և Հալէպէն  
դէպի հարաւ գտնուող բոլոր գաւառնե-  
րին մէջ : Մի մասը նստկան են , բայց  
մեծագոյն մասը վրանաբնակ՝ որոնք ի-  
րապէս անկախ են և միշտ հոգեր կը  
պատճառեն Դրան . Միւնթէֆիդ ցեղը  
Պաղտատի կողմը , Շամսառ՝ Հալէպի քո-  
վերը անդադար կռուի մէջ են թիւրք  
զօրագունքերի հետ և անհաշտ թշնամի  
են թիւրք կառավարութեան : Նստկան  
մասը հարստահարեալ դիրք մ'ունի , մա-  
նաւանդ Ափրիկեան Տրիպօլի կողմերը  
ուր գիւղացի Արաբք թէեւ մահմէտական ,  
սակայն անապատի կրակցած աւազին մէջ  
կը թաղուի թիւրք պաշտօնեային ձեռ-  
քով , մինչեւ որ վերջին լուսաւ հարկա-  
հաւաքին ծաղով տղապուրի աւաղի մէջ  
եփուելէ :

10. Տիւրքեր . — Մասնք մահմէտա-  
կանութիւն ցոյց տուած աւազմ , բայց  
պատրաստ են ուրիշ կրօնքներ ալ ըն-  
դունիլ եթէ աւելի շահաւոր գտնեն . ու-

1001-5485

նին իրենց համար գաղտնի կրօնք մը . կը բնակին Սիրիաի լեռները և ծովափուները : Երբեմն աւազակ , մարդասպան ժողովուրդ մը , սակայն Լիբանանի մէջ ըրած ջարդերէն ի վեր պատժուելով կալիզացած և այժմ երկրագործ բնակիչներ դարձեր են :

11. Մարոնիները Լիբանան բռնած են և կը գտնուին նաեւ Սիրիաի ծովեզերեայ տեղերը : 1860էն ի վեր կէս-անկախ իշխանութիւն մը կը կազմեն : Աշխատասիրութիւն և քաջութիւն իրենց բարեմասնութիւններն են : Կրօնքնին քրիստոնէութիւն է :

12. Քօզաբներն Սինոպի կողմերը կը բնակին և Խրիմէն եկած խաղախ գաղթականութեան մնացորդներն են :

13. Հրեայները կեդրոնացած են գըլխաւորապէս ծովեզերեայ քաղաքները : Այս վերջին 10 տարուան մէջ փորձ մը տեղի ունեցաւ Ռուսիայէն և ուրիշ տեղերէ հալածուած և գաղթած Հրեայները Դաւթի և Սողոմոնի երկիրը փոխադրել . սակայն այդ փորձ յաջող արդիւնքներ չարտադրեց և սիրալի ընդունելութիւն չգտաւ Թիւրքիայէն . Սիոնի երկիրը հաս-

տատուողները բարեբաասիկ չեղան . դոքա այժմ Երուսաղէմի մէջ ամենախեղճ թաղեր կը կազմեն և բարեպաշտ Հրեայների ողորմութիւնով կապրին գրէթէ : Հայաստան որի քաղաքացիներին մէջ երբեմն շատ կը գտնուէին Հրեայներ, այժմ շատ քիչ ունի անոնցմէ . 1000ի չափ կան Վանի հարաւակողմն Ադրակ գաւառին մէջ , նաեւ Տֆարպէի լի կողմերը :

14. Սիրիացիներ կամ Յակոբիկեան քրիստոնեայներն կը բնակին Մէրտին քաղաքի և Միջագետքի գաւառներին մէջ :

15. Գրգըլպաշ .— Ասոնցմէ 85,000 հօգի կը բնակին Հայաստանի Բալու , Տէրսիմ , Խարբերդ և Երզնկա գաւառները . միայն Տէրսիմի մէջ 40,000էն աւելի կը գտնուին : Մնացած բազմութիւնը կը գտնուին Գրգըլըրմագի (Ալիս գետ) ափերը , Սվազի կուսակալութեան մէջ ուր հարուստ , աշխատասէր և հանդարտ հասարակութիւն մը կը կազմեն : Լեզուինն ոմանց քրդերէն է , ոմանցն ալ տարբեր մի տեսակ որ զազաերէն կը կոչուի : Առհասարակ Շիա մահմէտական կը ճանչցուին , բայց տեղ տեղ բռնի կերպով ընդունած են Սիւննի մահմէտականութիւնը , ան-

ուանապէս միայն : Տէրսիմի Գրգըլպաշ-  
ները վերջին Արեւելեան պատերազմէն  
ետք միայն նուաճուեցան թիւրք զօրքե-  
րէ և բռնի կերպով թլիատուեցան . ի-  
րենց մէջ անծանօթ էին մզկիթն ու մօլ-  
լան և թիւրք զօրքերի քաշուելէն ետք  
նորահաստատ մօլլաներն ալ վռնտուե-  
ցան : Իրենք թշնամի են թիւրքերին ո-  
րոնք չեն համարձակիր անցնել անոնց  
լեռներէն առանց զօրաբանակի : Իրենց  
յատուկ դադտնի կրօնական պաշտամունք  
ունին , հին հեթանոսական դարերէ մը-  
նացած . բայց ամեն ճանրորդներ կը վկա-  
յեն որ քրիստոնէական մկրտութեան և  
հաղորդութեան ձեւերով պաշտօններ կը  
կատարեն , հացի խմորին վրայ խաչ կը  
քաշեն , հայ ուխտատեղիներն և աւերակ  
մատուռներն ուխտի կերթան , մատաղ-  
ներ կը տանին : Իրենց կիներ չայերի  
առջև երեւնալէ բնաւ չեն քաշուիր մինչ-  
դեռ . միւսլիման թիւրքէն կը զգուին և  
կը ծածկուին : Մահմէտականութիւնն առ  
երեսս դաւանող Գրգըլըրմաքըի Գրգըլ-  
պաշը Բամազանի ծովը դադտնի կերպով  
կը լուծէ և կը խնդայ միւսլիմանի հաւա-  
տալիքներին վրայ : Կրնայ շատ մը պատ-

ճառներով ենթադրուիլ թէ քրիստոնէայ  
ծագումէ եղած լինին ասոնք և Արարնե-  
րի ու թիւրքերի բռնութենէն ստիպուած  
լինին ետ կենալ քրիստոնէութիւնը հա-  
մարձակ պաշտել : Չորրորդ և Բարձր  
Հայոց արեւմտեան լեռնոտ դաւառների  
անառիկ տեղերն ամրացած Գրգըլպաշնե-  
րը աւաղակութիւնով և խաշնարածու-  
թիւնով կը զբաղին : Իրենց ցեղապետների  
իշխանութիւնը աւելի կը տարածուի այդ  
լեռների վրայ քան Խօղաթի թիւրք կա-  
ռավարչինը որ յաճախ ստիպուած է այդ  
ցեղապետներին նուէրներ և պատուա-  
նշաններ տալ , խաղաղութեան մէջ պա-  
հելու համար : Վերջերս սոքա թիւրք  
կառավարութենէն դուրսելով և քաջա-  
լերուելով սկսան Հայերին հետ թշնամա-  
նալ , նոցա հողեր դրաւել և հարստահա-  
րական գործիք մը դառնալ տիրող թիւրք  
իշխանութեան ձեռքը :

16. Եզիտիներ. — Մէրտինի քով Սին-  
ճար լեռների բարձրաւանդակն է ասոնց  
գլխաւոր բնակատեղը ուր 15,000ի չափ  
կան . կը գտնուին նաեւ Վանայ լճի հիւ-  
սիսային ափը 1500ի չափ և Վանայ Խօ-

շաբ գաւառի կողմերը իբր 2000 հոգի : Ասոնք մեկուսացած գեղերի մէջ կապրին . կերպով մը Հայաստանի բարիաներն են : Իրենց լեզուն քրդերէն է , բայց կրօնքն արեւտապաշտութեան և քրիստոնէական պաշտամունքների մի խառնուրդ է . Սատանան կը յարգեն անկէ չարիք չտեսնելու համար և արեւծաղին դէպի արեգակը դարձած կարճ աղօթքնին կընեն : Իրենց գլխաւոր Շէյխին քով կը մնայ ոսկեծոյլ աղաւնի մը որ երբեմն թափորով կը պալըտցունեն Նզիտինների գիւղերը , կըրօնական տուրքեր և նուէրներ հաւաքելու համար : Նզիտինների և Քիւրդերի մէջ գոյութեան կռիւը կայ միշտ . Քիւրդը Նզիտի մը սպաննելով առաքինութեան գօրծ մը կատարած կը լինի և Նզիտին ալ Քրդի արիւնը ծծելով միայն կրնայ մխիթարուիլ : Սինճար լեռներին մէջ նոքա երկար ատեն անկախ վիճակ մ'ունէին . բայց մօտ 60 տարի առաջ թիւրք կառավարութիւնը յանկարծակի անկանոն զօրքեր թափելով անոնց վրայ , մեծ կոտորած մ'անել տուաւ և նոյաճեց զիրենք : Ասոնք Հայը իրենց բարեկամ կը ճանչեն և չնայելով իրենց թուի քիչո-

րութեանն , միշտ յաջողապէս կը պաշտպանեն իրենք զիրենք Քուրդերի աւագակութիւններին դէմ և գողցուած ոչխարին ու սպաննուած մարդին փոխարէն իրենք ալ նոյնչափ կը գողնան և կը սպաննեն Քրդերէն :

17. Քաղցեացի կամ Նաւարանի Ասրիկեր . — Այս ցեղ կը բնակի Հէքեարիի (Փոքր Աղբակ) լեռներին ու հովիտներին մէջ , մի մասն ալ Մուսուլի գաւառերը . իրենց ազգակիցներ կան նաեւ Պարսից Ուրմի գաւառին մէջ որ իրենց գրացի է : Նրկու գասի կը բաժնուին . դաշտաբնակներն որոնք հայ գիւղացու հարստահարուած վիճակն ունին և լեռնաբնակներն որոնք ճուլամերկ գաւառի անառիկ լեռները գրաւած են և իբր 55,000 հոգի կը հաշուին , Ճէլօ , Դիար , Դիսուբ անունով աշիրէթների (ցեղ) բաժնուած : Դոքա միւս րալաների նման չեն և ստրկական հնազանդութիւն մը չեն յայտներ տիրօղ իշխանութիւններին . Քիւրդ մ'անպատիժ չկրնար նոցա սահմաններէն ներս թափանցել : Քիւրդերը քանի մ'անգամ փորձեցին կոտորել զանոնք և այդ լեռների ճանբան իրենց առջեւ բանալ : 1842ին

Քիւրդ Պետերիսան պէյը բարեկամութիւն ձեւացունելով յանկարծակի ներս մտաւ նոցա կիրճերէն և բարբարոսական ջարդեր ըրաւ . 8000էն աւելի Ասորիներ ջարդուեցան . սակայն իրենց ազատասիրութեան և ապառաժ լեռների սիրոյն զոհ եղողների աղաղակը Անգլիայի ազդու միջամտութիւնը հրաւիրեց և Թիւրքիա ստիպուեցաւ բանակ մը զրկել Պէտէրիսան Պէյը բռնելու և նորա հրոսակներ ցըրուելու համար : Այս գինալառ և պատերազմիկ ցեղը այն օրէ ի վեր սկսած է գըրաւել Անգլիայի մասնաւոր համակրութիւնը :

Արիւնահեղ կռիւներ միշտ անպակաս են Քուրդերի և այդ Ասորիների միջեւ . միոխադարձ սպանութիւններ և աւաղակութիւններ տեղի կունենան որովհետեւ թափառիկ և խաշնարած Քուրդերի ամենէն յարմար ճամբան այդ լեռների միջովը կանցնի և Ասորիներն ալ երբեմն կըստիպուին լեռներէն դուրս հանել իրենց ոչխարներ արածացնելու համար : Իրենց ապառաժ լեռներ բաւական արօտ չունին . իրենք ազատութիւննին պաշտպանելու համար այդ լեռների մէջ փակուած ,

կղզիացած կապրին և շատ աղքատ են որովհետեւ մշակելի հողեր բնաւ չկան այդ նեղ ձորերի մէջ ուր հազիւ 5-6 ոտք մեծութեամբ արտեր կը գտնուին կորեկ բուսցունող որ լեռնականների միակ սընունդն է , ինքնին առաջ եկած խաղողին և մի քանի պտուղների հետ : Այդ լեռների վրայ միայն իրենք կրնան մագլցելով ելնել իջնել . այր և կին պատերազմօղ են և իրենց ցեղապետները միայն կը հնազանդին : Լեզունին հին ասորերէնի աղաւաղած տեսակն է և կրօնքնին ամենապարզ քրիստոնէութիւն . իրենց հագուոր և մարմնաւոր պէտ Մարշիմոնը կը բնակի ճուլամերկի քով գտնուող Կոչանիս գիւղը որ Վանէն 3 օր հեռու է : Ասորիները Հայերին բարեկամն եղած են միշտ և կրօնական խտրութիւն մը չկայ մէջերնին . հայ գիւղերի և քաղաքների մէջ հաստատուող Ասորին շատ շուտ կընդունին Հայոց սովորութիւնները , կը խառնուին անոնց հետ ամուսնական կապերով իբր թէ ազգային և կրօնական ռեւէ տարբերութիւն մը չլինէր մէջերնին :

Վանի նահանգին մէջ գաղտաբնակ Ասորիների թիւը 40,000ի կը հասնի , ո-

րոնք սփռուած են գլխաւորապէս Ճու-  
լամերիկի նեղ դաշտերը, Նորտուզ և Կէ-  
վէռ գաւառները: Ասոնք ուրիշ րայա-  
ների նման զէնք կրելէ արգելուած են և  
ստրուկ բնաւորութիւն մ'ունին: Սակայն  
իրենց նեղութիւնների վրէժը լեռան Ա-  
սորիները կառնեն: Սոքա ամեն տարի  
խուժք խուժք Ռուսահայաստան կանցնին  
մուրալու և աշխատելու համար և կը վե-  
րադառնան ստակով:

18. Քիւրդեր. — Այս ցեղ որ ցրուած  
է 1000 քիլոմէր երկայնութեամբ և 250  
քիլոմէր լայնութեամբ ընդարձակ երկ-  
րի մը երեսը, ամենէն աւելի շատ դժ-  
ուարութիւններ կը պատճառէ ճիշդ վի-  
ճակագրութեան մը համար: Մեծ մասով  
թափառիկ են. ամառ և ձմեռ տարբեր  
նահանգների մէջ կը գտնուին որով շատ  
անգամ թէ՛ ամառուան և թէ՛ ձմեռուան  
կեցած գաւառին մէջ հաշուուելով իրա-  
կանէն կրկին թիւ մը կը ներկայացունեն:  
Երբ տաքերն սկսին, դոքա Վանի, Էր-  
զրումի բարձր լեռնադաշտերը կուգան.  
Իսկ ձմրան մօտ կիջնեն Մուսուլի և Տիգ-  
րանակերտի դաշտերը: Չնայելով որ Կ.  
Պօլէն մինչեւ Պաղտատ քիւրդի վրան.

ների կարելի է հանդիպել, սակայն ի-  
րենց թիւ 850,000էն աւելի չէ. ոմանք  
մինչեւ մէկ միլիոն կը հասցունեն: Գըզըլ-  
պաշներն և Եզիտիներն ալ ատոնց հետ հաշ-  
ուելով 1877ի թիւրք վիճակագրութեանն  
մէջ 120,000 Քիւրդ հաշուած են Էրզրումի,  
Վանի, Մուշի և Խարբերդի գաւառնե-  
րին մէջ. աւելի ճիշդ կը լինի դոցա թիւ  
175,000 հաշուել այդ կողմերի հա-  
մար: Ասոնք Սիւննի մահմէտական են:  
Մուսուլի և Տիգրանակերտի գաւառները  
Քիւրդեր աւելի հոծ բազմութիւնով կը  
գտնուին. Թիւրքօ-պարսկական սահմա-  
նագլուխը երկու կողմէն գրեթէ Քիւր-  
դերը բռնած են Արարատէն սկսած մին-  
չեւ Սիւլէյմանիէ (1): Քիւրդերը կը խօ-  
սին բազմաթիւ տարբեր և իրարու ան-  
հասկանալի գաւառալեզուներ. իրենց  
ցրուած վիճակին պատճառով ո՛չ ազգա-  
յին և ո՛չ լեզուի միութիւն ունին. չկայ  
հայրենիքի գաղափար իրենց համար, ո-  
րովհետեւ ոչ մէկ տեղ հաստատուն բնա-

(1) Քիւրդերէն 500,000 հոգի Պարսկաս-  
տան կը բնակին, 13,000 հոգի Ռուսահա-  
յաստան և 5000 հոգի ալ Պէլուճիստան:

կութիւն ունին . աւարի հոտը միայն կըր-  
նայ զիրենք միացունել կրօնամուլ Շէյխե-  
րի դրօշակին տակ : Իրար հետ ցեղական  
կռիւներ կու նենան միշտ և շատ կը պա-  
տահի որ ցեղի մը վերաբերօղ Քիւրդը չը  
կարենայ ուրիշ ցեղի հոգերէն անցնիլ :  
Քիւրդերի մէջ երկու որոշ դասակարգ  
կայ , ազնուականներ և րայաներ ( այս  
վերջիներ շէքեարիի մէջ տեղ տեղ իբր  
ստացուածք կը նկատուին իրենց ցեղա-  
պետներին և կը ծախուին կամ կը փո-  
խանակուին գիւղերին հետ մէկտեղ ) :

Քիւրդի գլխաւոր զբաղումն է , աւա-  
ղակութենէ զատ , խաշնարածութիւն .  
Հայաստանի և Անատոլիոյ ընդարձակ և  
անտէր արօտավայրերը նոցա առջեւ  
բացուած են : Մեծամեծ հօտեր ունին ,  
ամպերի նման լեռների վրայ տարածուած  
է նոցա սպիտակ բուրդով ոչխարների  
բազմութիւնը . միայն Հայաստանի կողմը  
գտնւօղ Քիւրդերը տարուէ տարի 500  
հազար գլուխ ոչխար կը ծախեն Պօլսի և  
Հալէպի հրապարակներին :

Քիւրդը թէեւ զինավառ ժողովուրդ  
մը , բայց պատերազմի յատկութիւնների  
մասին շատ ստոր կը մնայ Շամլիլի 2էր-

քէսէն և լեռնցի Ասորիէն . կանոնաւոր  
զօրքերի դէմ գտնուած ատեն հրացանի  
առաջին արձակման վրայ կը ցրուի . նո-  
րա յարձակումի թափը առաջին անգամ  
սաստիկ կը լինի , բայց երկար չգիմանար  
և առհասարակ կողոպուտ կընէ միայն  
այնտեղերէ ուր ժողովուրդը անգէն է և  
արիւն թափելու պէտք չմնար . ընդհա-  
կառակն զիմադրութիւն եղած ատեն  
շատ շուտ ձեռնթափ կը լինի աւարէն :  
Ապանութիւններ կընէ ոչ թէ զօհին դէմ  
առ դէմ կռուելով , այլ նորա կռնակէն  
կը զարնէ պահուելուած դիրքով և զօհին  
անգէն գտնուած ատեն : Ասոր ապացոյց  
սա է որ Քիւրդերը շատ չեն սիրեր Ասո-  
րիների և Նզիտիների հետ զարնուիլ ո-  
րոնք զէնք կը կրեն և թիւրք կառավա-  
րութիւնն շատ նշանակութիւն չտար երբ  
Քրդի դիակ մը գետին փռուի Ասորիէ մը  
կամ Նզիտիէ մը : Բայց Քիւրդը անվախ  
է Հայի վրայ յարձակելու ատեն , որով-  
հետեւ Հային արգիլուած է զէնք կրել —  
մինչեւ իսկ հասարակ դաշոյն մը . և ե-  
թէ երբեմն պատահի որ Հայը փորձէ  
ինքզինք պաշտպանել մանգաղով , քա-  
րով և Քիւրդ մը սպաննուի , վրէժխնդի-

րը թիւրք կառավարութիւնն է որ Հայկինքնօգնութեան ամեն գէպը իր օրոցքին մէջ խեղդեւ կաշխատի :

Քիւրդերը շատ գաւառներ ի մէջ անուանական հպատակութիւն մը միայն կը ցուցնեն թիւրք կառավարութեան . նորա թուրութեան պատճառով Տիարպէթիւրի կողմերը թափառող Ռաշքօթան ցեղը, Հէքեարի աշիրէթների մեծ մասը զօրք չեն տար, տուրք՝ շատ քիչ որ չբաւեր իրենց վրայ զրկօղ հարկահաւաք զօրագունքերի ծախքին : Վանի կողմն ալ թիւրք փաշան պարզեւներ և պատուանշաններ կըստիպուի տալ Հայտէրանլի, Շէմզիլի ևն. Քիւրդերին (որոնք սահմանագլխի մօտերը կը բնակին) որ չըլլայ թէ ատոնք թողուն իր երկիր և անցնին Պարսից սահմանը և երկիրը պարպուի իր այդ աշխարհաշէն բնակիչներէ :

Զէյթունի քով Բօզան տաղ կոչուած լեռնադաշտին վրայ ալ 50,000ի մօտ Քիւրդեր կը բնակին որոնք 10 տարի առաջ փորձեցին ապստամբիլ բոլորովին, սակայն շուտ մը նուաճուեցան երբ իրենց գլխաւորը Սուլթանէն եկած խոստումներին խաբուած՝ անձնատուր եղաւ և

գնաց Ափրիկէ քաւել իր դիւրահաւանութեան սխալը : Սեբաստիա նահանգին մէջ ալ 35,000 Քիւրդ կը գտնուի :

Քիւրդերը առհասարակ շատ տգեղ և կոշտ դիմագիծ մ'ունին (ի բաց առեալ մի քանի աղնուական տուները որոնք իրար հետ խնամութիւններ կը պահեն) : Այս ցեղն ալ դրեթէ չաճիր . իրենց մանուկներ բոլորովին խնամքներէ զուրկ լինելով շատ կը մեռնին, թափառիկ տաժանելի կեանքը իրենց աճման բնաւ չը նպաստեր, տեղէ տեղ փոխադրութեան ատեն կիներն այն սոսիճան կը նեղուին և գրաստական աշխատութիւնների կը դատապարտուին որ կը պատահին մայրեր որոնք իրենց նորածին աղջիկ զաւակների վրայ գլխաւով ծնած ատեն զանոնք կը խեղդեն որ իրենց վիճակի չենթարկուին :

Աւելցունենք նաեւ որ Քիւրդը հիւրասէր է, ինչպէս առհասարակ Հայաստանի ուրիշ ժողովուրդները : Կը գըտնուին նաեւ իրենց մէջ ասպետական բռնաւորութիւն ունեցող կտրիճներ որոնք հետզհետէ կը քիչնան և իրենց տեղը կը թողուն թիւրքերի հետ յարաբերութիւնով վարակուած՝ անբարոյական Մուսա-

ների և մոլեռանդ Ջէլալէտտինները : Քիւրդ ամբոխը ինքնին մոլեռանդ չէ և լեռան միամիտ գաւաղը իրեն պատիւ կը համարի Հային պատուակալ կնքահայր (քրիվա) լինել : Բայց վերջին 10 տարիներէ ի վեր զիրենք համարւամութեան ցանցին մէջ առնելու և բոլորովին աւերիչ խուժան մը դարձունելու համար եղած ջանքերը կը յաջողին դժբաղդապէս , չէյիսերի թունաւոր ազդեցութեան օգնութեամբ : Քիւրդն ու թիւրքը ունէ իրական համերաշխութիւն չունին իրար մէջ : Վերջինս մի խորթ օտարական կը ճանչցուի Քիւրդէն և ոսմի կը կոչուի անկէ : Քիւրդն այդ անուն ամեն անգամ սարսափով և զզուանքով կարտասանէ , զի ինքն ալ ազատուած չէ թիւրք փաշաների քահաճ կեղեքումներէն , նա ալ իր կարգին թիւրքի կասկածին կենթարկուել յաճախ : Քիւրդ ցեղապետների շարժումներն միշտ ուղադրութեամբ կը դիտուին թիւրք պաշտօնեայնէրէ և յաճախ խարդախ միջոցներով կը զսպուին : Ազգային սովորութիւններն բոլորովին կը տարբերին լեռան պարզամիտ Քիւրդի և քաղաքացի կեղծաւոր թիւրքի միջեւ :

կրօնական կապն իսկ չառ թոյլ է . թիւրք զօրականներ ամեն անգամ որ առիթ ունեցած են , բռնաբարեր են Քիւրդի ընտանեկան պատիւը , չխնայելով նոյն իսկ իսլամութենէն յարգուած Շէյխ Խաւտուլաշի հարէմին : Բայց այսօր Քիւրդը առերես կը շողոքորթուի քանի որ Հայնական խնդիր մը կայ : Թիւրքի դարաւոր և ճարպիկ քաղաքականութիւնն եղած է իր քրիստոնեայ մէն մի հպատակ ազգի քով , բացի թիւրք բանակներէ , մէկ մէկ ալ այլադաւան և հարստահարող ազգ պահել և այդպիսով մի ունէ ցեղի շարժումը կամ յառաջդիմութիւնն անոր քով դանձող ուրիշ ցեղի մը միջոցով խեղդել և կասեցունել , վերջինիս մէջ աւարառութեան և սպանութեան կիրքեր արթնցունելով : Այսպէս հարստահարչի պաշտօն տալով Քուրդին պահուած է Հայի կշարին , ինչպէս որ երբեմն ալ Տիւրքին կար Մարոնիին քով և Քրճալին (Բումէլիի Քրճալի գաւառի մահմէտականները) Պուրկարին քով : անոնցմէ առաջ ալ Պօսնիացին արձակուած էր Սերպերի վրայ և Ալաանիացին Ֆոյների վրայ : 19. Հայեր. — Յօդուած իս վերջ դրուած

ցուցակին համեմատ, Էրզրում, Վան, Բաղէշ, Խարբերդ և Տիարպէքիր վիլայէթներին մէջ Հայերի թիւն է այժմ 1,450,000 : 1878ի պաշտօնական սալնամէն Հայերի թիւը 1,330,000 կը գնէ որմէ 180,000ը Տիարպէքիրի և ֆնացածը Էրզրում, Վան և Բաղէշ վիլայէթների մէջ կը հաշուէ : Սահմանների փոփոխութիւնէն յետոյ, վերջին դադրեցականութիւններն ու հալածանքները, սովերը ևս, սոսկալի կերպով պակսեցուցած են Հայերի թիւը այդ գաւառների մէջ :

Հին Հայաստանի երկրագործ ժողովուրդն է որ այսօր կերելի տակաւին բնիկ հողին վրայ, պատերազմիկ դասակարգը ինչպէս նաեւ վաճառականութիւնով զբաղող քաղաքացիները ամենէն առաջ ձգեցին երկիրը և փոխան զանազան երկիրներ ահագին դադրեցականութիւններով : Ազնուական ցեղը մասամբ մը բռնաջինջ եղաւ Արարացիներէ և Թիւրքերէ որպէս զի երկրին մէջ ապստամբութեան առաջնորդող տարրերն պակսին, մի մասը յունական կայսրներին քով ապաւէն գտաւ և մի ուրիշ մասն ալ փութաց մահմէտականութիւն ընդունիլ և խառ-

նուիլ Քիւրդերի, Թիւրքերի և Պարսիկների հետ, իր անկախութիւն և կառավարման պահելու համար : Այդ երեւոյթ տեղի ունեցաւ նաեւ Հէրսէք-Պօսնիաի և Ալպանիաի մէջ ալ ուր այժմեան մահմէտական պէյերն և ցեղապետները հին քրիստոնեայ սլաւ կամ ալպանիացի իշխանների թոռներն են : Այսպէս, կարելի է հանդիպիլ Հայաստանի մէջ քիւրտ ցեղական անունների որոնք մարած հայ նախարարական տան հետքերը կը կրեն : Կորդուաց այն գաւառ ուր Սմբատ Սպարապետ կառուածներ ունէր և ուր տարաւ իր Ալանցի զերիններ, այսօր այնտեղ կայ Ալանի Աշխիթը. անոր քով ցըրուած են Մամիսուան (այս անունը բերդերէն է և կը նշանակէ քրիստոնեայների հօրեղբորորդի) քիւրդերը : Մամբգանի ցեղը այն լեռներ կը թափառի այսօր ուր երբեմն Մամիկոնեանց բերդերը կը բարձրանային : Տիւտէրի ուրիշ քիւրդ ցեղի մ'անունն է որ կը նշանակէ երկու եկեղեցիների վերաբերող թեմ : Մահմէտականացած Հայերի հետքը կը տեսնուի նաեւ Ակնի և Օլթիի գաւառներին մէջ :

Հայ ժողովուրդը թէեւ բազմաժին

ժողովուրդ մը, բայց տարուէ տարի ա-  
հագին կորուստներ տալով չկրնար բազ-  
մանալ. մէկ կողմէ երկրին թարմ ուժը—  
երիտասարդութիւնը երկրէն կը հեռա-  
նայ և միւս կողմէ գիւղացիները բռնու-  
թեան երեսէն փախչելով գլխաւոր քա-  
ղաքները կապաստանին և մեծ մասով  
կոչնչանան այնտեղ զրկումների և հի-  
ւանդութիւնների սլաճառով, քանի որ  
բնիկ հողէն խլուած տունիկ մը վիճակը  
կունենան:

Մեծն Հայաստանի գաւառներէն դուրս,  
Հայեր կը բնակին նաեւ Միջագետաց մէջ  
(50,000ի չափ), Փոքր Հայոց (500,000) և  
Փոքր Ասիոյ նահանգներին (420,000) մէջ  
որոց վերարերող հետեւեալ վիւայէթնե-  
րին մէջ Հայերի թիւը կարեւոր տեղ մը  
կը բռնէ. Տրապիզոնի մէջ կան 100,000  
Հայ, Սեբաստիա՝ 185,000, Էնկիւրի՝ 120  
հազար, Պրուսա՝ 115,000: Կիլիկիայի մէջ  
Հայերի թիւը կը հաշուուի 200,000ի մօտ  
որոնք կը բնակին գլխաւորապէս Հալպ  
վիւայէթի մէջ (90,000 հոգի), Ատանա՝  
(60,000), Գոնեա (20,000): Այս հաշիւնե-  
րով թրքական Մեծ Հայաստանի մէջ  
1,150,000 Հայ կը գտնուի 782,000 այլա-

սեռ ժողովուրդների դէմ, Փոքր Հայոց  
մէջ 500,000ի չափ Հայ՝ 1,200,000 այլա-  
սեռ բնակիչների դէմ. իսկ Կիլիկիայի  
մէջ 200,000 Հայ՝ 350,000 տարբեր ցեղէ  
անձի դէմ: Կիլիկիայի Մարաշ գաւառին  
մէջ կլինայ Զէյթուն, իսկ Ատանա նա-  
հանգին մէջ՝ Հաճին. ասոնք իրար կըց-  
ուած հայաբնակ երկու գաւառներ են  
որոց առաջինին մէջ 15,000 և երկրոր-  
դին մէջ 35,000 Հայեր կան: Զէյթունի  
մէջ 1878էն ի վեր թիւը գայմագամ կը  
նստի:

Արուսական Տաճկաստանի զանազան  
գաւառներն 200,000 Հայ կը գտնուի (մի-  
այն Կ. Պօլսի մէջ Հայերի թիւը 148,000  
է, 1888ի վիճակագրին նայելով) (1):

(1) Հայերի ամբողջական թուին վրայ  
գաղափար մը տալու համար աւելցունենք  
նաեւ որ Տաճկաստանի մէջ ապրող այս  
երկու և կէս միլիոնի մօտ Հայերէ զատ,  
առասական Հայաստանի և դրացի Կովկաս-  
եան գաւառներին մէջ կան 1 միլիոն 280  
հազար Հայեր և 150 հազար հոգի ալ  
Ռուսիայի և արուսական նահանգները (Նոր

Այստեղ կը գնենք բաղդատական ցու-  
ցակ մը, ցոյց տալու համար Թիւրքիաի  
մասն եղող Մեծ Հայաստանի գաւառ-  
ների բնակիչներին թիւը և կը վերջացու-  
նենք այս յօդուած :

Այժմ Թիւրքահայաստանի մէջ հազիւ

Նախիջևան, Պեսարապիա, Աժտէրխան  
և այլն) : Իսկ Պարսկաստանի Հայերը 42  
հազարէն աւելի չեն. ատոնցմէ 21,300ը  
կը վերաբերին Ատրպատականի առաջնոր-  
դութեան և մեծ մասով կեդրոնացած  
են Սալմաստ գաւառը ուր կայ 11,700  
Հայ. մնացածներն ալ Դավրէժ (2000),  
Խոյ, Ուրմի, Մարաղա, Մակու քաղաք-  
ներն և Սօլտուզ, Գարատաղ գաւառ-  
ներն. Պարսկահայերի մնացած մասը,  
20,700ը, Նոր Զուղաի թեմին կը պատկա-  
նին և կը բնակին Նոր Զուղա (2700),  
Թէհրան (353) քաղաքները և Փէրիա  
(7500), Զարմահալ (2400), Կեաբլու  
(2500) գաւառները և այլն :

Թիւրքիաի, Ռուսիաի և Պարսկաստա-  
նի երկիրներէն դուրս, աշխարհի զանա-  
զան երկիրներին մէջ հաստատուած գաղ-  
թականութիւններն բոլորը միասին, 30

6 մարդ կը բնակի մէկ քիլօմէտրի վրայ :  
Գլխաւոր մէջ Գրիգոր Լուսաւորչէն Տա-  
րօնոյ Ա. Կարապետ վանքին նուիրուած  
և Զենոր Գլակի գրքին մէջ յիշատակ-  
ուած հետեւեալ մի քանի գեղերին բաղ-  
մամարդութիւնը եթէ նկատի առնենք

հազարի թիւ մը կը կազմեն և գլխաւոր-  
ներն են Եգիպտոսի գաղթականութիւնը  
(6000 անձ), Բուժանիաի և Ալեքսանդրիաի  
հովուութիւնը (10,000), Պուրկարիաի Հա-  
յերն (5200), Ամերիկաի Միացեալ Նա-  
հանգների Հայերն (2000), Հնդկաստանի  
և Ճաւայի գաղթականութեան մնացորդը  
(1480)՝ որի մեծ մասը Կալիպթաի մէջ է  
(872 հոգւով) և մնացածներն ալ Պիր-  
մանիա, Մատրաս, Բատալիա (Իւրաքան-  
չիւր տեղ 40-50 անձ) և այլն : Եւրոպայի  
մի քանի գլխաւոր քաղաքները՝ Փարիզի,  
Մանչէսթրի, Մարսէյի, Լոնտոնի, ինչ-  
պէս և Ափրիկէի, Ասիաի և Ամերիկաի  
զանազան կէտերի վրայ ալ ցան ու ցիր  
Հայեր կը գտնուին :

Ինչպէս կը տեսնուի, երեք պետու-  
թիւններէն (Թիւրքիա, Ռուսիա, Պարս-  
կաստան) դուրս գտնուող Հայերի թիւը

և բազդատենք Հայաստանի այսօրուայ ամայի վիճակին հետ, չպիտի կրնանք զսպել մեր վիշտ ու զարմացում, տեսնելով թէ այժմ որչա՛փ աղքատներ է երկիրը որ չկրնար երկու միլիոնի չափ բնակիչները կշտացունել մինչդեռ Գ և Գ

Հայերի ամբողջ բազմամարդութեան մէկ հարիւրերորդն իսկ չկազմեր, թէեւ ազգային զանազան յիշատակագիրները և պատմագիրները 20-30 հազարներով հաշւած են Աւստրիայի, Րումանիայի, Նգիպտոսի և Հնդկաստանի գաղթականութիւնները և 100,000ներով նշանակած են Վեհաստանի և Խրիմի գաղթականութիւնների իւրաքանչիւրին թիւը. սակայն վերջերս ձեռք բերուած մանրամաս հաշիւները կը ցուցնեն որ այդ ճոխ և մեծաթիւ գաղթականութիւններ չկան այսօր, հաւուեր, ձուլուեր են իրենց շրջապատող տարրերի հետ, հեռքերն են որ այսօր կը տեսնենք տակաւին:

Վերոգրեալ հաշիւներէն կը տեսնուի որ թէ՛ հայրենիքի և թէ՛ զրացի ու հեռուոր երկիրների մէջ գտնուող ամբողջ Հայերի ազգաբնակչութիւնը մօտաւորա-

դարերին մէջ գեղերը այժմեան քաղաքների մեծութիւնն ունէին: Ամեն խօսքէ աւելի պերճախօս են Զեմոր Գլակի առաջ բերած այդ թուանշաններ: Նուիրուած գեղերէն Կուառս ունէր 3010 տուն և 3700 զինուոր կը հանէր, Խրաում՝ 900 տուն և ունէր 400 հեծեալ զօրք, Մեղտի 2080 տուն և 2000 զինուոր, Խորնի 1900 տուն և 1700 զինուոր, Պարեխ 1680 տուն և 1400 զինուոր, Կեղպէք 1600 տուն և 1400 զինուոր, Բազում 3200 տուն և 2600 զինուոր: Դժբաղդապէս պատմու-

պէս չորս միլիոնէ քիչ աւելի մի թիւ կը ներկայացունէ: Ռուսահայաստանէ դուրս մնացած ամեն տեղերի Հայերը հետզհետէ կը նուազին. եթէ պարբերապէս թիւրքիաէն և Պարսկաստանէն հայ պանդուխտներ և գաղթականներ չշարունակէին երթալ Աւրոսպի, Հնդկաստանի և Ամերիկայի հայաբնակ տեղերը, այդ տեղեր հաստատուած գաղթականութիւնների աճունը վաղուց իսկ Հայոց վիճակագիրներէն դուրս պիտի թողուէր:

Հայը միայն Հայաստանի մէջ կրնայ պահպանել իւր ազգութիւն:

Թիւնը հազիւ թէ այսպէս ցանցառ մի  
քանի թուանշաններ միայն աւանդած է  
մեզ Արշակունեաց ժամանակի բազմա-  
մարդութեան վրայ գաղափար մը տալու  
համար, այն ստենին որ « Ալի մը հսոյ  
անմշակ ջէր մնացած » :



## ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Հետեւեալ գիրքերն կարելի է  
ստանալ Արմենիաի խմբագրատունէն,  
իրենց առջեւ նշանակուած գիներով  
և փոստի ծախքը խմբագրատունէն  
վճարուելով :

Արժէքը կանխիկ չվճարուած՝ գիրք  
դրկուիր :

Հ. Ղ. Ալիշան — Պատկերագրող Աշ-  
խարհագրութիւն Նոր Հայաստանի (Բաղ-  
մահումա Հ. Ալիշանի աշխատասիրու-  
թեամբն հրատարակուած այս աշ-  
խարհագրութիւն որ մեծագիր և եր-  
կիջեան 405 երեսներէ բաղկացած է  
և դիւրահասկանալի պարզ գրաբար  
լեզուով գրուած, զարդարուած է  
35ի չափ պատկերներով որոց մէջ կը  
դանուին Վան քաղաքի, Վանի բեր-  
դի, Պայազիտի, Էջմիածնի, Անիի  
զանազան նշանաւոր աւերակների ևն.  
պատկերներն : Դրքին վերջը կը գրու-  
նուի բուն Հայաստանի, այսինքն Մեծ  
Հայքի, բոլոր քաղաքների, բերդե-

ընդարձակ ցանկը ուր իւրաքանչիւրին  
առջեւ նշանակուած է թէ գրքին  
քանիերորդ տանը մէջ գրուած է ա-  
նոր վրայ) : Դին 5 ֆր. և 50 սնթմ. :

—Հ. Ղ. Ալիշան— Նշմարք եւ Նշխարք  
Հայաստանի Ա, Բ և Գ պրակներ (Հա-  
յաստանի հետաքրքրական տեղերէն  
և քաղաքներէն 36 ին լուսանկար  
պատկերները ղետեղուած են Նշմարքի  
3 պրակներին մէջ, անոնցմէ իւրա-  
քանչիւրին վրայ պատմական և աշ-  
խարհագրական հմտալից տեղեկու-  
թիւններով, աշխարհաբար լեզուով  
գրուած վեր. Հ. Ղ. Ալիշանէն) : 3  
պրակներն միասին 26 ֆր. և 50 սնթմ.

—Հ. Ղ. Մ. Ալիշան — Հայկական աշ-  
խարհագրութիւն ( 1884 ին Վենետիկ  
գումարուած Աշխարհագրական Հա-  
մագգային ժողովին մէջ Հայաստանի  
աշխարհագրութեան նկատմամբ Հ.  
Ղ. Ալիշանի կարգացած ընդարձակ և  
հմտալից ճառին թարգմանութիւնն է  
հայերէն աշխարհաբար լեզուով ) : 65  
սանթիմ :

# ԹԻԻՐՓԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՒԱՌՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ

## ՑՈՒՑԱԿԸ

| Նախագրեր և գա-<br>ւառներ                    | Հայ       | Թիւրք   | Քիւրդ   | Ասորի  | Գլղալաշ | Եգիպտի | Զանազան<br>փոքր ցեղեր | Գումար    |
|---------------------------------------------|-----------|---------|---------|--------|---------|--------|-----------------------|-----------|
| 1. Էրզրում<br>(Բարերդ և Ալաշկերտ<br>մէկտեղ) | 390.000   | 80.000  | 10.000  |        |         |        |                       | 480.000   |
| Երզնկա                                      | 30.000    | 22.000  | — —     |        | 2.800   |        |                       | 54.800    |
| 2. Վան                                      | 154.000   | 15.000  | 21.000  | 1.500  |         | 1.500  |                       | 193.000   |
| Հէքեարի                                     | 40.000    |         | 30.000  | 86.000 |         | 2.000  |                       | 158.000   |
| 3. Բաղէշ                                    | 115.000   | 30.000  | 20.000  |        |         |        |                       | 165.000   |
| Սղերդ                                       | 75.000    | 5.000   | 23.000  |        |         |        |                       | 103.000   |
| Մուշ                                        | 118.000   | 25.000  | 10.000  |        |         |        |                       | 153.000   |
| (Կինճ, Գաւառ և լին.)                        |           |         |         |        |         |        |                       |           |
| 4. Տիարպէքիր<br>(Հիւսիսային մասը)           | 120.000   | 190.000 | 30.000  |        |         | 15.000 |                       | 355.000   |
| 5. Խարբերդ<br>(Բալու, Զարանճգ. ևս)          | 102.000   | 43.000  | 31.000  | 750    | 41.000  |        |                       | 217.750   |
| Տէրսիմ                                      | 6.000     | — —     |         |        | 40.000  |        |                       | 46.000    |
|                                             |           |         |         |        |         |        | 7.000                 | 7.000     |
|                                             | 1.150.000 | 410.000 | 175.000 | 88.250 | 83.800  | 18.500 | 7.000                 | 1.932.550 |

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐՓՈՒԿԱԼԵԱՆԻ

- Ա. Հայ դիւցազնունի մը (Սպառաճ)  
Բ. Հայ զինուորացի » »  
Գ. Սաղմոս Խարայէլի . . . . . , 40 անթ.  
Դ. Ազատութիւն Պաշտպանիոյ եւ  
Կենսագրութիւնը Պաշտպան  
ապստամբապետաց . . . . 1 Փր. 50 »  
Ն. Հայաստանի բշտականքը 1 » 20 »  
Զ. Գամառն Քարիպա = Ժո-  
ղովրդական Ընկերացարան  
(50 հատը մէկէն կը ծախ-  
ուի 2 Փր. եւ 50 անթիմ, իսկ  
մէկ հատը 10 անթիմ) . . . , 10 »  
Է. Լիւնքի օրէնքը Տանկանայա-  
տանում (20 հատը մէկէն կը  
ծախուի 3 Փր. եւ 50 անթիմ,  
իսկ մէկ հատը 20 անթիմ) . , 20 »  
Ը. Թիւրքիաի Հայերն եւ իրենց  
ղրացիներ . . . . . , 50 »

Գիրքերի փոստի ծախքը կը վճարուի  
հրատարակողէն որին պէտք է գիմեւ հե-  
տեւեալ հասցէով.

M. PORTOUKALIAN

(France)

MARSEILLE

ՀՀ Ազգային գրադարան



NL0191919

